ԳԼՈՒԽ Դ.

ՀԱՅ — ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՎԷՃԸ

Կօալիցիոն կառավարութեան օրով կատարուած ամենախոշոր դէպքը եղաւ, անշուշտ, հայ–վրացական բախումը, որ ահագին անդրադարձում ունեցաւ երկու երկրների ճակատագրի վրա:

Ինչպէս տեսանք նախընթաց գլուխներում, հայ–վրացական յարաբերութիւնները լաւ չէին: 1918թ. ամառը, հայերն ու վրացիները Թիֆլիսում, երկու թշնամի կողմեր էին: Դրութիւնը չմեղմացաւ և՛ Հայաստանի կառավարութեան Երևան մեկնելուց յետոյ: Ընդհակառակը, աւելի ևս սրուեց:

Նախկին հակամարտութիւնների, դժգոհութիւնների և սրացաւութիւնների վրա, այժմ, երբ Վրաստանն ու Հայաստանը այլևս անկախ պետութիւններ էին, աւելացաւ և՛ սահմանային վէճը, և՛ անդրկովկասեան ընդհանուր գոյքերի բաժանման խնդիրը, և՛ մի շարք ուրիշ ցաւոտ հարցեր:

Առանձնապէս ախտաւոր ձևեր ստացաւ սահմանային խնդիրը: Վրացիները, որ անկախութիւնից առաջ, բոլորովին համամիտ էին հայերին և մէկից աւելի անգամներ պաշտօնապէս յայտարարել էին, որ Ախալքալաքի գաւառն ու Բորչալուի շրջանի լեռնային մասը՝ Լոռին համարում են հայկական հողամաս, այժմ, յանկարծ, պահանջ դրին, որ Ախալքալաքն ու Լոռին մտնեն Վրաստանի սահմանների մէջ: Ծերեթելին այս պահանջը հիմնաւորում էր Վրաստանի համար «ռազմաքաղաքական սահմաններ» ստեղծելու անհրաժեշտութեամբ. Ախալքալաքի գաւառը և Լոռին մինչև Շահալի անհրաժեշտ էին վրացիներին իրենց պետութեան ապահովութեան համար: Իսկ Ժորդանիան առաջ էր քաշում և տնտեսական նկատումներ ու պատմական իրաւունքներ:

1918թ. յունիսի սկզբին,*) Վրաց Ազգ. Խորհրդի նախագահ Ժորդանիան և Վրաստանի վարչապետ Ռամիշվիլին այցելեցին Հայոց Ազգային Խորհուրդը և առաջարկեցին Ա. Ահարոնեանին, Ց. Քաջազնունիին ու Ա. Խատիսեանին՝ Բորչալուի բաժանում կատարել ազգային սկզբունքներով՝ խնդրելով նշանակել ներկայացուցիչներ այդ նպատակով: Ախալքալաքի մասին խօսք չկար, որովհետև նա գրաւուած էր Թիւրքերի կողմից: Հ. Ազգ. Խորհուրդը նշանակեց Խ. Կարճիկեանին, Գ. Խատիսեանին և զօր. Գ. Ղորղանեանին, որոնց Ի. Ծերեթելին, յանուն Վրաց Ազգ. Խորհրդի յայտարարեց, որ Վրաստանի սահմանների մէջ են մտնելու ամբողջապէս Ախալքալաքի,

*) Армяно-грузинскій вооруженный конфликт, 1919 г. Баку.